ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«12» դեկտեմբերի 2016 թվականի N 104 ք.Գյումրի

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի, 1.16-րդ կետի «ա» ենթակետի դրույթներով.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու N:38 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության բնականոն գործունեությունն ապահովելու, կազմակերպության կողմից Հայաստանի Հանրապետության կրթության մասին օրենսդրության պահանջները պատշաճ կերպով իրականացնելուն աջակցելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ՝ համաձայն հավելվածի:
2. Աշխատանքային խմբին՝ ապահովել անհրաժեշտ միջոցառումների իրականացումը՝ դպրոցի տնօրենի պաշտոնակատարի կողմից օրենսդրությամբ սահմանված պարտականությունները ստանձնելու եւ դպրոցի բնականոն գործունեությունը կազմակերպելու հարցում առկա խնդիրները կարգավորելու ուղղությամբ:

Հ.ՍԻՄՈՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի
2016 թվականի դեկտեմբերի <<12>>-ի
N104 կարգադրության

ԿԱԶՄ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ

Վազգեն Հարությունյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի խորհրդական, խմբի ղեկավար.

Հրայր Կարապետյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար,

Վաչագան Վարդանյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի պետ,

Արմեն Ստամբոլցյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի գլխավոր մասնագետ,

Նելլի Փահլևանյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի գլխավոր մասնագետ,

Արմեն Դավթյան – Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ,

Ռիտա Նարոյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի առաջատար մասնագետ:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Խ.ՊՈՂՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է